

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թ.



ԳՅՈՒՄՐՈՒ «ԿԱՐԱ-ՄՈՒՐՉԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՁ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՐԻՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- Ուսումնական մաս
- Կադրային քաղաքականություն
- Խորհուրդներ
- Նախագծեր
- Միջոցառումներ
- Վերանորոգումներ

Գյումրու «Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի նախագահ՝

/Մ. Մելքոնյան/

Ուսումնական մաս

2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի և 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի դրությամբ քոլեջում գործում են հետևյալ բաժինները՝

- Դաշնամուր
- Լարային գործիքներ
- Փողային և հարվածային գործիքներ
- Ժողովրդական գործիքներ
- Երգեցողություն
- Երգչախմբավարություն
- Էստրադային երաժշտարվեստ, որը 2016-2017 ուստարվանից վերանվանվեց «Էստրադային արվեստ»: Այս բաժինն ավարտող ուսանողները կդառնան շոումեններ, հանդիսամարվեր, համերգավարներ, հաղորդավարներ և այլն:
- Պարարվեստ
- Դիզայն
- Դերասանական արվեստ, որն իր առաջին դիմորդներն ունեցավ 2016-2017 ուստարվա սեպտեմբերին:

Ուսանողների մասնագիտական որակը բարձրացնելու համար քոլեջը նրանց ներկայացնում է բազմաթիվ ներքոլեջային և արտաքոլեջային միջոցառումների, համերգների, մրցույթների, որտեղից նրանք վերադառնում են բարձր գնահատականներով, պատվոգրերով, շնորհակալագրերով և մրցանակներով: Կազմակերպվում են նաև վարպետության դասեր տեղի և արտասահմանում բնակվող հայազգի երաժիշտ-կատարողների հետ, ովքեր իրենց մասնագիտական փորձով կիսվում են մեր ուսանողների հետ:

Քոլեջում բացի ուսանողների մասնագիտական որակներից խիստ ուշադրություն է հատկացվում նաև նրանց գրագիտությանը: Հանրակրթական բաժնի շրջանակներում դասավանդվում են հետևյալ առարկաները՝

- Հայոց լեզու
- Հայ գրականություն
- Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ
- Ռուսաց լեզու
- Օտար լեզու /Անգլերեն/
- Հանրահաշիվ
- Երկրաչափություն
- Հայոց պատմություն
- Աշխարհագրություն
- Ֆիզիկա

- Քիմիա
- Կենսաբանություն
- Ինֆորմատիկա և SZS
- Հաղորդակցություն
- Անվտանգություն և առաջին օգնություն
- Հոգեբանություն և մանկավարժության հիմունքներ
- Տնտեսագիտության հիմունքներ
- Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ
- Արվեստի պատմություն
- Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմունքներ
- Ճանապարհային անվտանգության կանոններ
- Համակարգչային օպերատրության հիմունքներ
- Բարոյագիտության և գեղագիտության հիմունքներ
- Քաղաքագիտության հիմունքներ
- Իրավունքի հիմունքներ
- ՆԶՊ
- Ֆիզկուլտուրա

Այս առարկաների դասավանդումը ևս ուղեկցվում է մի շարք նորագույն մեթոդների կիրառմամբ: Հաճախ ուսուցման ընթացքում կիրառվում է համակարգչային տեխնիկա և պրոեկտոր, որոնց օգնությամբ ցուցադրվում են տեսանյութեր կապված դասի թեմայի հետ:

Մասնագիտական և հանրակրթական ուղղություններից գատ կարևոր նշանակություն է տրվում ուսանողների ընդհանուր դաստիարակությանը, որն իրականացվում է կուրսղեկների կողմից կազմակերպվող հատուկ դասաժամերի միջոցով: Յուրաքանչյուր կիսամյակի համար կուրսղեկների կողմից ներկայացվում է որոշակի ծրագիր, որն ընդգրկում է ուսանողների դաստիարակության տարաբնույթ ուղղվածություններ:

- Գեղագիտական դաստիարակություն, որի շրջանակներում ուսանողները հնարավորություն են ստանում այցելել Մատենադարան, թանգարաններ, տուն-թանգարաններ, կինոթատրոն, թատրոն, ցուցահանդեսներ, հուշահամալիրներ, կատարվում է ռեֆերատների ընթերցում արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ:
- Բարոյագիտական դաստիարակություն՝ զրույցներ, քննարկումներ, բանավեճեր տարբեր բարոյագիտական թեմաների շուրջ:
- Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն, համաձայն որի ուսանողների մեջ սերմանվում է հայրենասիրություն, կամք և արիություն: Կազմակերպվում են միջոցառումներ, ֆիլմերի դիտում, զրույցներ, բանավեճեր,

որոնք ճիշտ պատկերացում ու գաղափարներ են ձևավորում «հայրենիք», «քանակ» և «հայրենասիրություն» հասկացությունների վերաբերյալ:

- Հոգևոր դաստիարակություն, այսինքն ճիշտ ձևավորել և զարգացնել ուսանողների հոգևոր արժեքներն ու ծանոթացնել հայկական եկեղեցու տոներին ու ծիսակարգերին:
- Ֆիզիկական դաստիարակություն
- Ընդհանուր կազմակերպչական հարցեր:

Այս ամենի հետ մեկտեղ ուշադրությունից չի վրիպում նաև ուսանողների ընդհանուր էթիկային և վարվելակերպին վերաբերող աշխատանքները:

2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի հունվար ամսվա դրությամբ քոլեջի ընդհանուր ուսանողների թիվը կազմում է 93, որից

11-ը դաշնամուրային,

6-ը լարային գործիքներ,

14-ը փողային գործիքներ,

19-ը ժողովրդական գործիքներ,

13-ը երգեցողություն,

6-ը էստրադային արվեստ,

12-ը պարարվեստ,

9-ը դիզայն բաժիններում:

2015-2016 ուստարում ավարտեց 29 ուսանող:

2016-2017 ուստարում ընդունվեցին 36 ուսանող հետևյալ բաժիններում

3 դաշնամուր

1 լարային գործիքներ

1 փողային գործիքներ

6 ժողովրդական գործիքներ

13 երգեցողություն

1 երգչախմբավարություն

4 պարարվեստ

4 դիզայն

2 դերասանական արվեստ

Այժմ քոլեջն ունի 100 ուսանող:

Կադրային քաղաքականություն

Կադրային նոր համալրումներ

25.01.2016թ.	Սարգսյան Ռուստամ	դասախոս
	Սամվելյան Սուրեն	դասախոս
	Բաղրամյան Քնարիկ	դասախոս
01.02.2016թ.	Հովհաննիսյան Հեղուշ	գրադարանավարուհի
01.09.2016թ.	Նիկոյան Արմինե	դասախոս
	Գաբոյան Տիգրան	դասախոս
	Մանուկյան Ռիմա	դասախոս
24.10.2016թ.	Կուրդիյան Կարինե	գլխավոր հաշվապահ
01.11.2016թ.	Խուրշուդյան Մերի	արխիվավար, համակարգչային տեխասպասարկող

Ֆիզարձակուրդում գտնվողներ

01.02.2016թ.	Տոնոյան Անի	դասախոս
--------------	-------------	---------

Աշխատանքից ազատվածներ

31.01.2016թ.	Հակոբյան Գևորգ	դասախոս
30.06.2016թ.	Սամվելյան Սուրեն	դասախոս
	Սարգսյան Ռուստամ	դասախոս
	Սիրունյան Արմենուհի	դասախոս

	Ղուկասյան Լուսինե	նվագակցող
31.08.2016թ.	Հովհաննիսյան Մարիետտա	դասախոս
24.10.2016թ.	Թորոսյան Ալինա	գլխավոր հաշվապահ
01.11.2016թ.	Ալեքսանդրյան Իզաբելլա	դասախոս
30.11.2016թ.	Գաբոյան Տիգրան	դասախոս

**2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի վերջի դրությամբ
աշխատողների ցուցակը.**

N	Աշխատողի ազգանուն անուն հայրանուն	Պաշտոնը
1.	Կարապետյան Մարիյա Սյոմիկի	Տնօրեն
2.	Զոլախյան Պարզև Սերգեյի	Ու/գ փոխտնօրեն
3.	Կուրդինյան Կարինե Միշայի	Գլխավոր հաշվապահ
4.	Հովհաննիսյան Հեղուշ Հովհաննեսի	Հաշվապահ
5.	Աթանյան Կարինե Ադասու	Գրադարանի վարիչ
6.	Հովհաննիսյան Կարինե Հակոբի	Կադր. տեսուչ, քարտ/մեք.
7.	Մանուկյան Լիարիկ Մնացի	Պահեստապետ
8.	Գրիգորյան Հռիփսիմե Համազասպի	Պարետ
9.	Թորոսյան Աշոտ Փայլակի	Զինղեկ
10.	Անտիկյան Անահիտ Վանոյի	Տիգղեկ
11.	Մուրադյան Թամարա Սամվելի	Ուս/մ քարտ, քարտ/մեք.
12.	Պետրոսյան Վարդան Տիգրանի	Տնտեսավար
13.	Մինասյան Վարդգես Սերոբի	Լարող
14.	Խուրշուդյան Մերի Սուրենի	Արխիվ/ համակ. տեխ. սպ.
15.	Հանեսյան Ինթիգար Հարությունի	Հավաքարար
16.	Դավթյան Արմիկ Արմենակի	Հավաքարար
17.	Փանոսյան Գևորգ Վերաժինի	Գիշերային պահակ
18.	Մարտիրոսյան Հարություն Սերյոժայի	Գիշերային պահակ
19.	Գասպարյան Ռուզաննա Գևորգի	Նվագակցող
20.	Ղուկասյան Ռուզաննա Ադասու	Նվագակցող
21.	Պետրոսյան Կիմա Վոլոդյայի	Նվագակցող
22.	Գրիգորյան Ասյա Վոլոդյայի	Նվագակցող
23.	Հովհաննիսյան Մանյա Գուրգենի	Նվագակցող
24.	Հեքիմյան Կարինե Հովհաննեսի	Նվագակցող
25.	Վարոսյան Արաքսյա Ռաֆիկի	Նվագակցող
26.	Գալոյան Նարինե Դուգլասի	Նվագակցող
27.	Գրիգորյան Սոնյա Հմայակի	Դասախոս
28.	Վարդանյան Գոհար Հարությունի	Դասախոս

29.	Վահրամյան	Սուսաննա	Գրիշայի	Դասախոս
30.	Սարգսյան	Ռայա	Գրիգորի	Դասախոս
31.	Տոնոյան	Անի	Հրանտի	Դասախոս
32.	Վարոսյան	Երվանդ	Ռազմիկի	Դասախոս
33.	Զատիկյան	Արտուշ	Խաչիկի	Դասախոս
34.	Տաշչյան	Արամ	Գևորգի	Դասախոս
35.	Զայիմցյան	Վահան	Գևորգի	Դասախոս
36.	Ավետիսյան	Գառնիկ	Էդուարդի	Դասախոս
37.	Երեմյան	Ալվարդ	Ռաֆիկի	Դասախոս
38.	Այվազյան	Տիգրան	Արտավազդի	Դասախոս
39.	Համբարձումյան	Կարինե	Սամսոնի	Դասախոս
40.	Մանասյան	Նաիրա	Սամվելի	Դասախոս
41.	Ավետիսյան	Աննա	Եդիգարի	Դասախոս
42.	Գասպարյան	Միհրան	Զիվանի	Դասախոս
43.	Հարությունյան	Երագիկ	Ռաֆիկի	Դասախոս
44.	Հովհաննիսյան	Արմեն	Վարդգեսի	Դասախոս
45.	Հովհաննիսյան	Աննա	Նորայրի	Դասախոս
46.	Իսահակյան	Դոնարա	Գևորգի	Դասախոս
47.	Գրիգորյան	Լաուրա	Խաչիկի	Դասախոս
48.	Հակոբյան	Եղեգնուհի	Արամի	Դասախոս
49.	Հարությունյան	Հասմիկ	Հայկի	Դասախոս
50.	Թոսունյան	Անի	Պարգևի	Դասախոս
51.	Դավթյան	Անի	Գեորգիի	Դասախոս
52.	Մինասյան	Գոհար	Ազատի	Դասախոս
53.	Մարտիրոսյան	Կարեն	Համլետի	Դասախոս
54.	Վարդանյան	Լյուդմիլա	Պողոսի	Դասախոս
55.	Պապոյան	Հովհաննես	Արտուշի	Դասախոս
56.	Սնիսյան	Նարինե	Պլատոնի	Դասախոս
57.	Նորատյան	Տիգրան	Սերյոժայի	Դասախոս
58.	Մանուկյան	Ռիմա	Մկրտչի	Դասախոս
59.	Բաղրամյան	Քնարիկ	Ալեքսանդրի	Դասախոս
60.	Ասատրյան	Վաղարշակ	Լևիկի	Դասախոս
61.	Նիկոյան	Արմինե	Մկրտչի	Դասախոս

Կադրային փոփոխություններից բացի 2016 թվականին ցիկլերում ևս կատարվեցին փոփոխություններ և առանձնացվեց նոր «Գեղարվեստի ցիկլ»:

Կատարողական ցիկլ – Գոհար Վարդանյան

Երաժշտա-տեսական ցիկլ – Դոնարա Իսահակյան

Գեղարվեստի ցիկլ – Նարինե Սնիսյան

Հանրակրթական ցիկլ – Ռիմա Մանուկյան

Խորհուրդներ

2016 թվականի դրությամբ քոլեջում գործում են հետևյալ խորհուրդները՝

Կառավարման խորհուրդ

Այս խորհուրդի միջոցով է իրականացվում քոլեջին վերաբերող տարաբնույթ հարցերի քննարկումներն ու որոշումների ընդունումը:

2016թ. դրությամբ խորհրդի անդամներն են.

1. Սակար Մելքոնյան – ՀՀ Շիրակի մարզի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ – հիմնադրի ներկայացուցիչ – խորհրդի նախագահ
2. Դոնարա Իսահակյան – դասախոսական կազմի ներկայացուցիչ – խորհրդի քարտուղար
3. Մխիթար Սարգսյան – Գյումրու պետական տեխնիկական քոլեջի տնօրեն – լիազոր մարմնի ներկայացուցիչ
4. Հռիփսիկ Սահակյան – Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տարածքային մշակման բաժնի պետ – զբաղվածության ծառայության ներկայացուցիչ
5. Սուսաննա Բաղդասարյան – Շիրակի մարզային գրադարանի մեթոդ բաժնի վարիչ, արհկոմի նախագահ
6. Ալվարդ Երեմյան – դասախոսական կազմի ներկայացուցիչ
7. Վարդան Գյոդակյան – ուսանողական կազմի ներկայացուցիչ
8. Արուսյակ Ղևոնդյան – ուսանողական կազմի ներկայացուցիչ
9. Սարգիս Մկրտչյան – ուսանողական կազմի ներկայացուցիչ

Մինչ 2016թ ավարտը խորհրդի կազմում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Տնօրինական խորհուրդ

2016թ. քոլեջում տնօրեն Մարիյա Կարապետյանի նախաձեռնությամբ ձևավորվեց տնօրինական խորհուրդ: Խորհուրդը քննարկում է ոչ միայն ուսումնադաստիարակչական, այլև մի շարք աշխատանքային, միջոցառումներին ու որոշ նախագծերին վերաբերող և այլ տարաբնույթ հրատապ հարցեր:

Տնօրինական խորհուրդի անդամներն են՝

1. Մարիյա Կարապետյան – տնօրեն, խորհրդի նախագահ
2. Պարզև Չոլախյան – ու/զ փոխտնօրեն

3. Կարինե Կուրդինյան – գլխավոր հաշվապահ
4. Դոնարա Իսահակյան – երաժշտա-տեսական ցիկլի նախագահ
5. Գոհար Վարդանյան – կատարողական ցիկլի նախագահ
6. Նարինե Մնխչյան – գեղարվեստի ցիկլի նախագահ
7. Ռիմա Մանուկյան – հանրակրթական ցիկլի նախագահ
8. Թամարա Մուրադյան – խորհրդի քարտուղար

Ուսանողական խորհուրդ

2016թ սեպտեմբեր ամսից քոլեջում կրկին ձևավորվեց և սկսեց գործել ուսանողական խորհուրդը: Այս խորհուրդի անդամներն են

- | | | |
|-----------|---------------------|-----------|
| 1. Անի | Գրիգորյան /նախագահ/ | I կուրս |
| 2. Անուշ | Վասիլյան | I կուրս |
| 3. Նեկտար | Մդդեայան | II կուրս |
| 4. Մարտին | Գալստյան | II կուրս |
| 5. Լիլիթ | Ղարիբյան | III կուրս |
| 6. Մարիամ | Մկրտչյան | III կուրս |
| 7. Նելլի | Սաղաթեյան | IV կուրս |
| 8. Տիգրան | Կարապետյան | IV կուրս |

Նախագծեր

Քոլեջը 2016 թվականի ընթացքում իրականացրել է հետևյալ նախագծերը

Մանկապատանեկան ֆիլհարմոնիա

Մանկապատանեկան ֆիլհարմոնիան սկսեց գործել 2015 թվականին և գոյություն ունի մինչ օրս: Այն ղեկավարվում է քոլեջի դաշնակահարուհիներ Մանյա Հովհաննիսյանի և Ասյա Գրիգորյանի կողմից: Նրանք կազմակերպում են զեկուցումներ և ֆիլմերի ցուցադրություն տարբեր երաժիշտների և երաժիշտ-կատարողների կյանքի և ստեղծագործական ուղու վերաբերյալ:

«Հրաշքների մոլորակ» մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-փառատոն

Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի տնօրեն Մարիյա Կարապետյանի կողմից նախաձեռնվեց «Հրաշքների մոլորակ» մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-փառատոնը, որի կազմակերպչական աշխատանքները մեկնարկեցին փետրվար ամսից՝ քոլեջի երաժշտա-տեսական բաժնի վարիչ Դոնարա Իսահակյանի ղեկավարությամբ: Նախապես հայտարարված մեկամսյա ժամկետում հավաքագրվեց մրցույթի մասնակցության մոտ 240 հայտ ինչպես Գյումրու, այնպես էլ Շիրակի մարզի համայնքների երաժշտական և հանրակրթական դպրոցի սաներից:

Մրցույթ-փառատոնի մասնակիցները բաժանվեցին և դասակարգվեցին ըստ նախապես սահմանված տարիքային խմբերի (I խումբ-5-7տ., II խումբ 8-10տ., III խումբ 11-13 տ., IV խումբ 14-17 տ.) և մասնագիտությունների (երաժշտական, դիզայն, պար և ասմունք):

Սույն թվականի ապրիլի 28-ին մրցույթ-փառատոնի մեկնարկին ընդառաջ տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որի ընթացքում պարզաբանվեցին մրցույթ-փառատոնի կազմակերպչական աշխատանքներին վերաբերող բոլոր մանրամասները::

Մրցույթի մեկնարկը տրվեց 2016թ. մայիսի 3-ին և անցկացվեց եռօրյա ժամկետում:

Մրցութային երեք օրերը լուսաբանվեցին ինֆորմացիոն հովանավոր «Շիրակ» հանրային հեռուստաընկերության կողմից, ինչը շարժեց շատերի հետաքրքրությունը:

Մրցութային 3 օրերի ընթացքում ժյուրին հայտնաբերեց մոտ 150 շնորհալի, տաղանդավոր երեխաների և պատանիների: Մայիսի 12-ին տեղի ունեցավ «Հրաշքների մոլորակ» մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-փառատոնի արդյունքների ամփոփումը, մրցանակների և պատվոգրերի հանձնումը: Ձեռնունայն չմնացին նաև այն մասնակիցները, ովքեր որևէ մարցանակային տեղ չէին զբաղեցրել, սակայն ստացան խրախուսական հուշանվերներ և շնորհակալագրեր մրցույթին մասնակցելու համար: Մրցանակների հանձնման արարողությանը հետևեց գալահամերգ մրցույթի դափնեկիրների մասնակցությամբ: Ապա մայիսի 19-ին «Հրաշքների մոլորակ»-ի հրաշքները իրենց գեղեցիկ կատարումներով փայլեցին նաև Երևանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բեմում:

Ամառային դպրոց

Ելնելով «Հրաշքների մոլորակ» մրցույթ-փառատոնի արձանագրած հաջողություններից նոր գաղափար հղացավ անցկացնել ամառային դպրոց, որտեղ ընդգրկվեցին փառատոնի լավագույն մասնակիցները:

Ամառային դպրոցի մեկնարկն ազդարարվեց հունիսի 28-ին «Ազգային պատկերասրահ» XII միջազգային փառատոնի հիմնադիր-նախագահ Մարիամ Շահինյանի և մասնակիցների հետ հանդիպմամբ: Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի հյուրընկալ կամարներն այս անգամ ընդունեց Սոֆյա Մելիքյանին /դաշնամուր, Ֆրանսիա/, Ջեմմա Աբրահամյանին /ջութակ, Շվեյցարիա/, Գուրգեն Կակոյանին /կլարնետ, Շվեյցարիա/ և Անդերս Միոլինին /կիթառ, Շվեյցարիա/:

Փառատոնի հիմնադիր-նախագահ Մարիամ Շահինյանը ներկայացրեց վերոհիշյալ երաժիշտներին, ապա հանգամանորեն պատմեց փառատոնի և նրա անցած ուղու մասին, ցուցադրվեց հակիրճ պատմող տեսանյութ: Երաժիշտները հանդես եկան փոքրիկ համերգային ծրագրով, ներկայացրեցին իրենց երաժշտական գործիքների առավելություններն ու առանձնահատկությունները: Հանդիպման ավարտին անցկացվեցին վարպետության դասեր քոլեջի լավագույն ուսանողների հետ:

Այժմ համառոտ կներկայացնենք ամառային դպրոցի միջոցառումների շարքը.

- Հուլիսի 6 - դաս «Հայ երգչախմբային արվեստի զարգացման պատմությունը» խորագրով, /քոլեջի երգչախմբի ղեկավար Աննա Հովհաննիսյան/:
- Հուլիսի 7 - քոլեջի լարային բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Սարգսյանի մենահամերգը (դասախոս՝ Պարզև Չոլախյան):
- Հուլիսի 8 - դասախոսություն «Միրենք մեր լեզուն» /քոլեջի հանրակրթական ցիկլի նախագահ Մարիետտա Հովհաննիսյան և դասախոս Արմենուհի Միրունյան/
- Հուլիսի 9 - հանդիպում Հայաստանի վաստակավոր արտիստ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի ղեկավար, դիրիժոր Ռոբերտ Մլքեյանի հետ:
- Հուլիսի 13 - զեկույց նվիրված Վ. Ա. Մոցարտին /քոլեջի դաշնամուրային բաժնի դասախոս Մանյա Հովհաննիսյան/
- Հուլիսի 15 - դաս «Նկարչություն ազատ թեմայով» /քոլեջի «Դիզայն» բաժնի դասախոս Նարինե Սնիսյան/
- Հուլիսի 20 – զեկույց «Չարի և բարու գոյամարտը» /հանրակրթական ցիկլի դասախոս Արմենուհի Միրունյան/

- Հուլիսի 22 – Հանդիպում Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր Լյուդվիգ Հարությունյանի, դերասաններ՝ Հովհաննես Հովհաննիսյանի, Տիգրան Գաբոյանի և քոլեջի նորաբաց «Դերասանական արվեստ» բաժնի դասախոս, դերասան Վաղարշակ Ասատրյանի հետ:

Բացի «Շիրակ» հանրային հեռուստաընկերությունից մրցույթ-փառատոնը լուսաբանվեց «Հայաստանի հանրային հեռուստաընկերության» կողմից՝ «Առավոտ լուստ» և «Հայլուր» ծրագրերի շրջանակներում: «Հրաշքերի մոլորակ» մրցույթ-փառատոնի հաջողություններից ելնելով տնօրեն Մարիյա Կարապետյանը և կազմակերպչական կազմը որոշեցին այն դարձնել շարունակական և ամենամյա:

Միջոցառումներ

- Միջոցառում նվիրված դաշնակահարուհի Մարիա Ղամբարյանին – 30.03.2016թ. – կազմակերպիչ Սոնյա Գրիգորյան
- Հանդիպում ջութակահար Հմայակ Դուրգարյանի հետ – 15.04.2016թ. – կազմակերպիչ Սոնյա Գրիգորյան
- Գիտելիքի օր – 01.09.2016թ. – կազմակերպիչ Դոնարա Իսահակյան
- Միջոցառում նվիրված ՀՀ անկախության 25 ամյակին – 20.09.2016թ. – կազմակերպիչ Դոնարա Իսահակյան, վարող Կարեն Մարտիրոսյան
- Միջոցառում նվիրված ուսուցչի օրվան – 05.10.2016թ. – կազմակերպիչ Դոնարա Իսահակյան
- Հանդիպում Անդրանիկ Ներսիսյանի հետ – 15.11.2016թ. – կազմակերպիչ Լաուրա Գրիգորյան
- Հանդիպում պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի հետ – 01.12.2016թ. – կազմակերպիչ Պարզև Չոլախյան
- Ձեկույց-ֆիլմի ցուցադրում նվիրված Էմիլ Գիլելսին – 16.12.2016թ. – կազմակերպիչ Գոհար Վարդանյան, զեկուցեղ Մանյա Հովհաննիսյան
- Տարեվերջյան հաշվետու համերգ 2016 – 27.12.2016թ. – կազմակերպիչներ՝ Դոնարա Իսահակյան և Գոհար Վարդանյան:

Վերանորոգումներ

2016 թվականի մայիս - սեպտեմբեր ամիսների ընթացքում կատարվել են մի շարք վերանորոգման աշխատանքներ:

Սալիկապատվել է մուտքի աստիճանավանդակը և երկրորդ հարկի միջանցքի հատակը:

Վերանորոգվել է պարասրահը և կից հանդերձարանը՝ հարթեցվել է առաստաղը, ներկվել են պատերը, ինչպես նաև հղկվել ու ներկվել է հատակը:

Երրորդ հարկում խոհանոցի համար առանձնացված տարածքը ենթարկվեց կոսմետիկ բարենորոգման:

Հոկտեմբեր ամսին վերանորոգվեց նաև լսարաններից մեկը՝ հարթեցվեց առաստաղը, պատերը պաստառապատվեցին և հղկվեց հատակը:

Վերանորոգման աշխատանքներին զուգընթաց ամռանը վերջապես լուծում ստացավ քոլեջի առջև երկար տարիներ ծառացած մի շատ կարևոր հարց՝ ջեռուցման համակարգի անցկացումն ու տեղադրումը: